ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 18 հունիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի հունիսի 1-ին, իսկ այդ դիմումին կցված նյութերում տեղ գտած վրիպակն ուղղելու դիմումը՝ 2015 թվականի հունիսի 11-ին)՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27, 3, 43-րդ (2-րդ մաս) հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 2-րդ մասի՝ «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով» դրույթը,

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 18 և 19, 27, 43-րդ (երկրորդ մաս) հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ «սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները» ու «հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը» դրույթները և ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 279-րդ հոդվածի «այլ հաղորդումների» դրույթները՝ աղբյուրը բացահայտելու վարույթների մասով»:

Դիմողը գտնում է, որ, մասնավորապես, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող՝ «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով» դրույթը չափազանց լայն հնարավորություն է ընձեռում միջամտելու խոսքի ազատության իրավունքին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի իրավակարգավորումներն անհամատեղելի են արդար դատաքննության և խոսքի ազատության իրավունքների կոնվենցիոն և սահմանադրական սկզբունքների հետ:

Քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի «այլ հաղորդումների» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

18 հունիսի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-17